Կ-1338[1]-21.04.2026-ՏՀ-011 **Երկրորդ ընթերցում**

Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-143-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «գործընթաց» բառից հետո լրացնել «, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 5.2-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 34-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.
2) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 35-րդ կետով.

«35) իրականացնում է Եվրոպական Միության Առևտրի վերահսկման և փորձագիտական համակարգում տնտեսավարող սուբյեկտի գրանցումը և գրանցման դադարեցումը:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.1-ին հոդվածով.

«Հոդված 14.1. Հայաստանի Հանրապետությունից Եվրոպական Միության երկրներ ձկան կամ ձկնամթերքի արտահանման նպատակով Առևտրի

վերահսկման և փորձագիտական համակարգում տնտեսավարող սուբյեկտի գրանցումը, գրանցման դադարեցումը և առողջության սերտիֆիկատը

1. Հայաստանի Հանրապետությունից Եվրոպական Միության երկրներ ձկան կամ ձկնամթերքի արտահանման նպատակով՝ ձկնաբուծական տնտեսությունները կամ ձկնամթերքի արտադրական կազմակերպությունները կամ ձկան կամ ձկնամթերքի պահպանում իրականացնող կազմակերպությունները (այսուհետ՝ սույն հոդվածում տնտեսավարող սուբյեկտ) պետք է գրանցված լինեն Եվրոպական Միության Առևտրի վերահսկման և փորձագիտական համակարգում (այսուհետ՝ սույն հոդվածում համակարգ):
2. Համակարգում գրանցվելու նպատակով՝ տնտեսավարող սուբյեկտը Կառավարության որոշմամբ հաստատված կարգով դիմում է ներկայացնում լիազոր մարմին:
3. Դիմումը ստանալուց հետո՝ լիազոր մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա իրականացվում է ստուգում՝ համակարգում գրանցման համար սահմանված պահանջների համապատասխանությունը պարզելու նպատակով: Սույն մասով սահմանված հրամանում նշվում են ստուգում իրականացնող մարմնի անվանումը, ստուգում իրականացնող անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, տնտեսավարող սուբյեկտի անվանումը և հասցեն, ստուգման նպատակը և ժամանակահատվածը:
4. Ստուգման ավարտից հետո անհամապատասխանություններ չհայտնաբերելու դեպքում՝ տեսուչի կողմից ստուգման արդյունքներով կազմված համապատասխանության վերաբերյալ եզրակացության հիման վրա՝ լիազոր մարմինը տնտեսավարող սուբյեկտի տվյալները գրանցում է համակարգում և ներկայացնում Եվրոպական Հանձնաժողովի հաստատմանը:

5. Եվրոպական Հանձնաժողովի հաստատումը ստանալուց հետո՝ տնտեսավարող սուբյեկտը համարվում է համակարգում գրանցված և լիազոր մարմինը տնտեսավարող սուբյեկտին տրամադրում է գրանցման համար:
6. Համակարգում գրանցումը անժամկետ է:
7. Համակարգում գրանցման նպատակով տնտեսավարող սուբյեկտի կողմից դիմումին կից ներկայացված փաստաթղթերում լիազոր մարմնի սահմանված ժամկետում թերությունները չշտկելու կամ ստուգման ընթացքում անհամապատասխանություններ հայտնաբերելու կամ Եվրոպական Հանձնաժողովի կողմից գրանցումը չհաստատելու դեպքում՝ տնտեսավարող սուբյեկտի համակարգում գրանցման նպատակով ներկայացված դիմումը մերժվում է:
8. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված հիմքերով գրանցման նպատակով դիմումը մերժելն արգելք չէ հետագայում նորից դիմելու համար:
9. Համակարգում գրանցված լինելու դեպքում՝ Եվրոպական Միության երկրներ ձուկ կամ ձկնամթերք արտահանելու համար տնտեսավարող սուբյեկտը հայտ է ներկայացնում լիազոր մարմին՝ առողջության սերտիֆիկատ ստանալու նպատակով:
10. Գրանցման պահից սկսած՝ տարին առնվազն մեկ անգամ, լիազոր մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտի մոտ իրականացվում է ստուգում՝ համակարգում գրանցման համար սահմանված պահանջների համապատասխանությունը պարզելու նպատակով:
11. Սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված ստուգումների արդյունքում անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում՝ տրվում է հանձնարարական՝ (կարգադրագիր) սահմանելով դրանք վերացնելու համար ժամկետ, որը համաձայնեցվում է տնտեսավարող սուբյեկտի հետ:
12. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված ժամկետում անհամապատասխանությունները չվերացնելու դեպքում, ինչպես նաև

տնտեսավարող սուբյեկտի դիմումի հիման վրա լիազոր մարմնը դադարեցնում է տնտեսավարող սուբյեկտի գրանցումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

13. Սույն հոդվածով կարգավորվող հարաբերությունների նկատմամբ կիրառելի չէ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքը:»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կ-1338[1]-21.04.2026-ՏՀ-011/1~~0~~ Երկրորդ ընթերցում

Լրամշակված ~~նախագիծ~~

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-143-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «գործընթաց» բառից հետո լրացնել «, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 5.2-րդ հոդվածի՝

3) 3-րդ մասի 34-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.
4) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 35-րդ կետով.

«35) իրականացնում է Եվրոպական Միության Առևտրի վերահսկման և փորձագիտական համակարգում տնտեսավարող սուբյեկտի գրանցումը և գրանցման դադարեցումը:»:

Հոդված ~~2~~3. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.1-ին հոդվածով.

«Հոդված 14.1. Հայաստանի Հանրապետությունից Եվրոպական Միության երկրներ ձկան կամ ձկնամթերքի արտահանման նպատակով Առևտրի վերահսկման և փորձագիտական համակարգում տնտեսավարող սուբյեկտի գրանցումը, գրանցման դադարեցումը և առողջության սերտիֆիկատը

14. Հայաստանի Հանրապետությունից Եվրոպական Միության երկրներ ձկան կամ ձկնամթերքի արտահանման նպատակով՝ ձկնաբուծական տնտեսությունները կամ ձկնամթերքի արտադրական կազմակերպությունները կամ ձկան կամ ձկնամթերքի պահպանում իրականացնող կազմակերպությունները (այսուհետ՝ սույն հոդվածում տնտեսավարող սուբյեկտ) պետք է գրանցված լինեն Եվրոպական Միության Առևտրի վերահսկման և փորձագիտական համակարգում (այսուհետ՝ սույն հոդվածում համակարգ):
15. Համակարգում գրանցվելու նպատակով՝ տնտեսավարող սուբյեկտը ~~Հայաստանի Հանրապետության~~ Կկառավարության որոշմամբ հաստատված կարգով դիմում է ներկայացնում լիազոր մարմին:
16. Դիմումը ստանալուց հետո՝ լիազոր մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա իրականացվում է ստուգում՝ ~~Եվրոպական Միության Առևտրի վերահսկման և փորձագիտական~~ համակարգում գրանցման համար սահմանված պահանջների համապատասխանությունը պարզելու նպատակով: Սույն մասով սահմանված հրամանում նշվում են ստուգում իրականացնող մարմնի անվանումը, ստուգում իրականացնող անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, տնտեսավարող սուբյեկտի անվանումը և հասցեն, ստուգման նպատակը և ժամանակահատվածը:

17. Ստուգման ավարտից հետո անհամապատասխանություններ չհայտնաբերելու դեպքում՝ տեսուչի կողմից ստուգման արդյունքներով կազմված համապատասխանության վերաբերյալ եզրակացության հիման վրա՝ լիազոր մարմինը տնտեսավարող սուբյեկտի տվյալները գրանցում է համակարգում և ներկայացնում Եվրոպական Հանձնաժողովի հաստատմանը:
18. Եվրոպական Հանձնաժողովի հաստատումը ստանալուց հետո՝ տնտեսավարող սուբյեկտը համարվում է համակարգում գրանցված և լիազոր մարմինը տնտեսավարող սուբյեկտին տրամադրում է գրանցման համար:
19. Համակարգում գրանցումը անժամկետ է:
20. Համակարգում գրանցման նպատակով տնտեսավարող սուբյեկտի կողմից դիմումին կից ներկայացված փաստաթղթերում լիազոր մարմնի սահմանված ժամկետում թերությունները չշտկելու կամ ստուգման ընթացքում անհամապատասխանություններ հայտնաբերելու կամ Եվրոպական Հանձնաժողովի կողմից գրանցումը չհաստատելու դեպքում՝ տնտեսավարող սուբյեկտի համակարգում գրանցման նպատակով ներկայացված դիմումը մերժվում է:
21. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված հիմքերով գրանցման նպատակով դիմումը մերժելն արգելք չէ հետագայում նորից դիմելու համար:
22. Համակարգում գրանցված լինելու դեպքում՝ Եվրոպական Միության երկրներ ձուկ կամ ձկնամթերք արտահանելու համար տնտեսավարող սուբյեկտը հայտ է ներկայացնում լիազոր մարմին՝ առողջության սերտիֆիկատ ստանալու նպատակով:
23. Գրանցման պահից սկսած՝ տարին առնվազն մեկ անգամ, լիազոր մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտի մոտ իրականացվում է ստուգում՝ ~~Եվրոպական Միության Առևտրի վերահսկման և փորձագիտական~~ համակարգում գրանցման համար սահմանված պահանջների համապատասխանությունը պարզելու նպատակով:

24. Սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված ստուգումների արդյունքում անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում՝ տրվում է հանձնարարական՝ (կարգադրագիր) սահմանելով դրանք վերացնելու համար ժամկետ, որը համաձայնեցվում է տնտեսավարող սուբյեկտի հետ:
25. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված ժամկետում անհամապատասխանությունները չվերացնելու դեպքում, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտի դիմումի հիման վրա լիազոր մարմնը դադարեցնում է տնտեսավարող սուբյեկտի գրանցումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
26. Սույն հոդվածով կարգավորվող հարաբերությունների նկատմամբ կիրառելի չէ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքը:»:

Հոդված ~~3~~ 4. ~~Եզրափակիչ մաս~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-1338-21.04.2026-ՏՀ-011/1) ԵՎ «ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-1338[1]- 21. 04. 2026-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկությանն վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1338-21. 04. 2026-ՏՀ-011/1)					

1	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում առաջարկվում է հանել «(այսուհետ՝ «Օրենք»)» ձևակերպումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծում «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքին այլևս հղում չի կատարվում:	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
2	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի լրացվող 22. 7-րդ կետում առաջարկվում է «կազմակերպություններին կամ» բառերից հետո լրացնել «ձկան կամ» բառերը, քանի որ պահպանում իրականացնող կազմակերպությունը իրկանացնում է ոչ միայն ձկնամթերքի այլ նաև ձկան պահպանում:	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
3	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրն առաջարկվում է հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջը, այն է. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի»:	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1338[1]- 21. 04. 2026-ՏՀ-011/1)					

1	Կառավարություն	2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում նոր լրացվող 14.1-ին հոդվածում «14.1»-ից հետո առաջարկվում է դնել միջակետ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված պահանջը, այն է. «Հոդվածների եւ մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2	Կառավարություն	2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում նոր լրացվող 14.1-ին հոդվածի 1-ին մասում առաջարկվում է «կազմակերպություններին կամ» բառերից հետո լրացնել «ձկան կամ» բառերը, քանի որ պահպանում իրականացնող կազմակերպությունը իրականացնում է ոչ միայն ձկնամթերքի այլ նաև ձկան պահպանում: 2-րդ մասում առաջարկում է «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերը փոխարինել «Կառավարության» բառով, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պահանջները:	Ընդունվել է:	**Ընդունվել է:**

3	Կառավարություն	2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածում սահմանվում է այսուհետ «համակարգ» բառը, հետևաբար առաջարկվում է 3-րդ և 10-րդ մասում հանել «Եվրոպական Միության առևտրի վերահսկման և փորձագիտական» բառերը:	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
4	Կառավարություն	3-րդ հոդված	Նախագծում առկա է վրիպակ՝ առաջարկվում է շտկել հոդվածների համարակալումը:	Ընդունվել է:	**Ընդունվել է:**